ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

18.01.2018Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 13 անդամները:

Բացակայում են՝ Ն.Բաբայանը և Ն. Վարդանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Շ. Սարգսյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը,Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը,Պ.Գաբրելյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 89-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
2. Չարենցավան համայնքի 2018 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
3. Չարենցավան համայնքի սեփականության 2017 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
4. Չարենցավան համայնքի «Չարենցավանի մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վճարները սահմանելու մասին:
5. Չարենցավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
6. Քնարիկ Մաիլյանին «Արամ Խաչատուրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու համաձայնություն տալու մասին:
7. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 76 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -13 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 89-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Պ. Գաբրեյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ հաշվի առնելով, որ Չարենցավան համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատվել է 2017 թվականի դեկտեմբերի 22-ին և չի արտացոլվել 2018 թվականի տարեսկզբի պարտքերը և բյուջեի վարչական ու ֆոնդային մասերի ազատ մնացորդները՝

առաջարկում եմ, կատարել լրացումներ և փոփոխություններ 2018 թվականի հաստատված բյուջեում, քանի որ նախորդ տարվա պարտքերը նոր են ձևավորվել:

<u>Համայնքի ղեկավար . Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 13 **դեմ - 0** **ձեռնպահ** -

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի 2018 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Պ. Գաբրեյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝ ***առաջարկում եմ*** նախադպրոցական ուսումնական հաստատությունների պարտավորությունները մարելու նպատակով՝ հատկացնել գումար բյուջեի պահուստային ֆոնդից:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-13 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3 Չարենցավան համայնքի սեփականության 2017 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

/Զեկ. Պ. Գաբրեյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի դրույթներով՝

առաջարկում եմ հաստատել Չարենցավան համայնքի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:.

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ -13 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4.Չարենցավան համայնքի «Չարենցավանի մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վճարները սահմանելու մասին:

/Զեկ. Վ. Չիլինգարյան/

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 23.11.2006թ. «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը հաստատելու մասին թիվ 1910-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 13-րդ և 19-րդ կետերի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 17 –րդ ենթակետով.

Առաջարկում եմ հաստատել «Չարենցավանի մշակույթ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների վճարների չափերը և համայնքի բյուջեի միջոցների հաշվին կատարվող թաղման ծախսերի առավելագույն չափերը:

ա) գերեզմանատեղի պատրաստում - 10000 դրամ
բ) գերեզմանոցի խնամք - 5000 դրամ
գ) աճյունի տեղափոխում - 10000 դրամ
դ) շինարարական և կենցաղային աղբահանում 1տն - 1000 դրամ
ե) գերեզմանոցի հարդարում, հողի հարթեցում 3*4 - 5000 դրամ
զ) գործիքների վարձակալություն 1 օր - 100 դրամ
է) դագաղի ձեռքբերում հիմնադրի որոշմամբ - 40000 դրամ
ը) հուշատախտակի պատրաստում - 5000 դրամ
թ) կառուցապատման աշխատանքներ 1 օր - 3000 դրամ
ժ) վճարովի հիմունքներով հատկացվող 1 քմ հողատարածքի արժեք- 2940 դրամ:
ի) սգո հանդիսությունների սրահի վարձակալություն 1 օր-20000 դրամ

Համայնքի ավագանու անդամ ***Հակոբ Գրիգորյան- առաջարկում եմ*** Կարենիս գյուղի գերեզմանատան աշխատանքները կազմակերպելու համար ավելացնել գերեզմանատան վերակացուի հաստիք:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում առաջարկը:

Կողմ-13 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-13 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Չարենցավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշումը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի 1 ենթակետով՝

առաջարկում եմ հաստատել Չարենցավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը:

Համայնքի ղեկավար Հ.Շահգալդյան ***առաջարկում եմ*** հանձնաժողովում ընդգրկել նաև Չարենցավան համայնքի ավագնու որևէ անդամի:

Համայնքի ավագանու անդամ ***Ն.Վարդանյան-*** առաջարկում եմ ավագանու անդամ ***Ա.Գասպարյանի*** թեկնածությունը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում առաջարկը:

Կողմ - 13 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 13 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

/Զեկ. Շ. Սարգսյան/

6. Քնարիկ Մաիլյանին «Արամ Խաչատուրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու համաձայնություն տալու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 16-րդ կետով՝

Առաջարկում եմ տալ համաձայնություն Զարենցավան համայնքի ղեկավարի՝ ***Քնարիկ Մաիլյանին*** «Արամ Խաչատուրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու առաջարկին:

Համայնքի ավագանու անդամ ***Հ.Գրիգորյան***- Ինչ մասնագիտություն ունի Քնարիկ Մաիլյանը: Աշխատակազմի քարտուղար ***Շ.Սարգսյան***- ՀՀ ՊՈԱԿ-ների մասին օրենքի համաձայն, ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակվելու համար պարտադիր է բարձրագուն կրթությունը և ոչ թե բարձրագույն մասնագիտական :

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-13 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Լսեցին.

7.Զարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 76 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին;

/Զեկ. Շ. Սարգսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հաշվի առնելով Զարենցավան համայնքի ***«Զարենցավանի Մշակույթ»*** ՀՈԱԿ-ի տնօրեն ***Ա.Աբգարյանի*** գրությունը՝

առաջարկում եմ Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 76 որոշման 12 հավելվածի մեջ՝ գերեզմանատան վերակացուի հաստիքային միավորի «4» թիվը փոխարինել «5»-ով;

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-13 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Սահակյան Երեմ		**Գրիգորյան Հակոբ**	
Վարդանյան Նորայր		**Դավթյան Կարեն**	
Վարդանյան Սարգիս		**Երիցյան Գագիկ**	
Փանոսյան Արթուր		**Եփրեմյան Տարոն**	
Բաբայան Վալերի		**Խլղաթյան Արսեն**	
Գասպարյան Անատոլի		**Պողոսյան Մնացական**	
Գասպարյան Մելիք			

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Շ. Սարգսյանը _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**